

ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆՏԵՐԻ ՆՈՐԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐԵԼԱԴՈՐԾՈՒՄԸ

ԼԵՎՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնական ֆոնտերի¹ վերարտադրության բարձր և կայուն տեմպերը միշտ էլ համապատասխանել են հասարակական ամբողջական արդյունքի ու սոցիալիստական արտադրական հարաբերությունների ընդլայնված վերարտադրության տեմպերին: Իննեբրորդ հնգամյակում ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ մեր հանրապետության հիմնական ֆոնտերի արժեքը աճել է 1,5 անգամ, իսկ ընթացիկ հնգամյակում դրանք համապատասխանաբար կավելանան 1,4 և 1,5 անգամ: Հիմնական ֆոնտերի քանակական աճն ուղեկցվում է դրանց նորացումով²: Դա պահանջում է լուրջ ուշադրություն դարձնել նաև այդ ֆոնտերի նորացման պրոցեսի արագությանը, որը կարելի է հետազոտել նորացման և դուրս գրման գործակիցների օգնությամբ: Նորացման գործակիցը որոշվում է որոշակի ժամանակամիջոցում (տարի) գործարկված նոր հիմնական ֆոնտերի արժեքի և այդ ժամանակամիջոցի վերջում առկա հիմնական ֆոնտերի արժեքի հարաբերությամբ, իսկ դուրս գրման գործակիցը՝ տվյալ տարում մաշվածության և հնացածության հետևանքով դուրս գրված հիմնական ֆոնտերի արժեքի և տարեսկզբին հիմնական ֆոնտերի ընդհանուր արժեքի հարաբերությամբ:

Նորացման և դուրս գրման գործակիցները միարժեքորեն են բնորոշում, հիմնական ֆոնտերի աճի տեմպը: Հիմնական ֆոնտերի աճի տեմպի (S_{Φ}) նորացման (Φ_1) և դուրս գրման (Φ_2) գործակիցների միջև եղած կապը կարելի է արտահայտել հետևյալ կերպ.

$$S_{\Phi} = \frac{1 - \Phi_2}{1 - \Phi_1}$$

1971—1975 թթ. ընթացքում Սովետական Հայաստանի արդյունաբերության և նրա առավել կարևոր ճյուղերի հիմնական ֆոնտերի գործարկման, դուրս գրման և նորացման վերաբերյալ տվյալները ամփոփված են աղյուսակ № 1-ում:

¹ Այստեղ և այսուհետև հիմնական ֆոնտերի գրառության ժամանակ մենք նկատի ունենք հիմնական արտադրական ֆոնտերը:

² Նորացումը պետք է դիտարկել որպես պրոցես, երբ տեղի ունի հիմնական ֆոնտերի պարբերաբար փոխարինում ու համալրում՝ նոր, տեխնիկապես կատարելագործված ֆոնտերով, որոնք որակապես տարբերվում են գործող ֆոնտերից:

Հիմնական արտադրական ֆոնդերի նորացումը ՀՍՍՀ արդյունաբերության մեջ 1971—1975 թթ. (տոկոսներով)³

Արդյունաբերության ճյուղեր	Նոր դրժարկված հիմնական ֆոնդերի տեսակարար կշիռը հիմնական ֆոնդերի ընդհանուր արժեքում					Մշակման հետևանքով դուրս գրված հիմնական ֆոնդերի տեսակարար կշիռը հիմնական ֆոնդերի ընդհանուր արժեքում					Նորացման մակարդակը				
	1971	1972	1973	1974	1975	1971	1972	1973	1974	1975	1971	1972	1973	1974	1975
Ամբողջ արդյունաբերությունը	12,0	8,4	7,3	7,9	7,1	2,9	1,3	1,5	1,4	1,4	11,3	7,7	7,4	8,2	7,2
Այդ թվում															
էլեկտրաէներգետիկա	14,0	9,1	3,2	4,5	4,1	0,9	0,1	1,5	0,4	1,4	12,3	7,8	3,2	5,2	4,1
Քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն	8,5	4,9	8,6	4,5	3,7	4,2	1,5	1,6	1,1	1,3	7,6	3,5	8,6	4,4	3,6
Մեքենաշինության և մետաղամշակման արդյունաբերություն	14,4	8,3	11,6	11,2	8,9	2,7	2,5	1,9	1,3	1,5	10,8	7,8	11,6	11,3	8,6
Անտառային, ցելյուլոզի-թղթի և փայտամշակման արդյունաբերություն	16,2	7,6	14,9	10,8	17,5	5,4	1,2	3,7	1,8	1,5	12,2	7,1	14,8	10,6	15,6
Շինանյութերի արդյունաբերություն	16,2	8,1	3,9	7,1	3,1	5,6	2,7	2,8	2,8	2,7	16,2	7,8	3,8	7,1	3,1
Թեթև արդյունաբերություն	13,2	12,8	9,4	11,0	10,9	4,2	2,8	3,1	2,6	2,9	11,2	11,9	9,2	10,8	10,9
Սննդի արդյունաբերություն	13,2	12,6	8,2	12,5	9,2	2,0	1,1	1,2	2,0	1,3	11,2	13,2	7,9	13,7	9,1

³ Հաշվարկները կատարված են ՀՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության տվյալների հիման վրա:

ինչպես երևում է աղյուսակից, նորացումը համապատասխանաբար բարձր և կայուն է մեքենաշինության, անտառային, ցելյուլոզի-թղթի և փայտամշակման, սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերում:

Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, մաշվածության և հնացածության հետևանքով դուրս դրված հիմնական ֆոնդերի ցածր տեմպերի դեպքում նորացման գործակցի մեծությունը մոտենում է հիմնական ֆոնդերի աճի տեմպերին: Սակայն այս ձևով հաշվարկված նորացման գործակիցը չի կարող ձիշտ արտացոլել հիմնական ֆոնդերի իրական նորացումը:

Նորացման ցուցանիշը տնտեսական իմաստ կարող է ստանալ միայն այն դեպքում, երբ հաշվի առնվի նաև նոր գործարկվող հիմնական ֆոնդերի որակական կազմը, որը ներկայումս գործնական հաշվարկներում հաշվի չի առնվում: Ներկայումս հիմնական ֆոնդերի զգալի մասի «նորացումը» սահմանափակվում է միայն ֆիզիկական նորացմամբ, քանի որ նոր գործարկվող ֆոնդերի տեխնիկատնտեսական մակարդակը կա՛մ նույնն է, կա՛մ քիչ է տարբերվում արդեն գործող հիմնական ֆոնդերի մակարդակից: Նորացման տնտեսական էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է սահմանադատել նորացման «էքստենսիվ» և «ինտենսիվ» ուղիները:

Ժողովրդական տնտեսության զարգացման արդի փուլում հիմնական ֆոնդերի ինտենսիվ ընդլայնումը և կատարելագործումը դրանց արդյունավետության բարձրացման առավել կարևոր և հիմնական ուղիներից մեկն է: Տնտեսագիտական գրականության մեջ հիմնական ֆոնդերի ինտենսիվ վերարտադրության տնտեսական արդյունավետությունը հանձնարարված է որոշել տարբեր ցուցանիշներով: Այդ ցուցանիշների հիմնական թերությունը պետք է համարել այն, որ դրանց օգնությամբ հնարավոր չէ ինչպես ամբողջ արդյունաբերության, այնպես էլ դրա առանձին ճյուղերի կամ ձեռնարկությունների մասշտաբով նոր գործարկված հիմնական ֆոնդերի հատույցը (որոշակի ժամանակամիջոցում) տարանջատել ամբողջ ֆոնդերի հատույցից: Միայն այդպիսի տարանջատման դեպքում հնարավոր կլինի ճիշտ որոշել հիմնական ֆոնդերի ինտենսիվ վերարտադրության արդյունավետությունը, դրանց ֆիզիկական ու բարոյական նորացման աստիճանը:

Հիմնական ֆոնդերի ֆիզիկական նորացման աստիճանը որոշվում է տվյալ ժամանակահատվածում նոր գործարկված և տարեկանում առկա հիմնական ֆոնդերի ընդհանուր ծավալի հարաբերությամբ: Ամբողջ երկրի մասշտաբով այդ ցուցանիշները կհամընկնեն հիմնական ֆոնդերի բացարձակ աճի տեմպերի հետ, իսկ հանրապետության, առավել ևս ճյուղի և ձեռնարկության կտրվածքով դրանք մեծ մասամբ կշեղվեն: Դա բացատրվում է նրանով, որ նոր գործարկվող հիմնական ֆոնդերի աճի տեմպերը կախված են ոչ միայն նոր շինարարության և վերակառուցման, ինչպես նաև հնացածության և մաշվածության հետևանքով լուծարքի ենթարկվող հիմնական ֆոնդերի չափերից, այլև առանձին ձեռնարկությունների կամ ճյուղերի միջև հաշվեկշռից հաշվեկշիռ դրանց անհատույց տեղափոխումից:

Ճիշտ է, հիմնական ֆոնդերի ֆիզիկական նորացումը ինչ որ չափով նախատում է դրանց բարոյական նորացմանը, սակայն գործնականում սուպոսիվներին չի առանձնացվում: Այդ իսկ պատճառով հիմնական ֆոնդերի նորացման ինտենսիվությունը որոշելիս ներկայումս կիրառվում են ցուցանիշներ, որոնք ամբողջությամբ չեն բնորոշում նորացման ինտենսիվությունը:

Այդպիսի ցուցանիշներից կարելի է առանձնացնել աշխատանքի արտադրողականությունը, ֆոնդահատույցը, ֆոնդադինվածությունը, արդյունաբերության տեխնիկապես առաջատար ճյուղերի հիմնական ֆոնդերի տեսակարար կշռի աճը և այլն: Ժիշտ է, այլ հավասար պայմաններում բարձր արտադրողական տեխնիկայի գործարկումը կնպաստի աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և կբարելավի այդ ցուցանիշը, սակայն այդպիսի փոփոխությունը չի կարող ամբողջովին արտահայտել ինտենսիվ նորացման պրոցեսի նույնիսկ քանակային կողմը:

Հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացումը գնահատելու համար Ա. Շենյդերովը⁴ հանձնարարում է մաշվածության և հնացածության հետևանքով դուրս գրված հիմնական ֆոնդերի արժեքը պակասեցնել հաշվեկշռից հաշվեկշռ փոխանցված ֆոնդերի արժեքի չափով և ստացված արդյունքը հարաբերել հիմնական ֆոնդերի տարեկան ընդհանուր արժեքին⁵: Նա այդ ցուցանիշն անվանում է «ինտենսիվ նորացման գործակից» ի տարբերություն «էքստենսիվ նորացման գործակից», որը հանդիսանում է նոր գործարկված հիմնական ֆոնդերի արժեքի և ամբողջ ֆոնդերի տարեկան արժեքի հարաբերությունը:

Այստեղ «ինտենսիվ» նորացման գործակիցը որոշվում է նոր գործարկված ֆոնդերի միայն այն մասով, որն ամբողջովին փոխարինում է մինչ այդ գոյություն ունեցող ֆոնդերին: Ստացվում է, որ եթե ինչ որ ժամանակաշրջանում հիմնական ֆոնդերը ամբողջությամբ փոխարինենք նոր ֆոնդերով, ապա տեղի կունենա հիմնական ֆոնդերի առավելագույն չափով ինտենսիվ նորացում: Սակայն այդ դեպքում անուշադրության է մատնվում այն կարևոր հանգամանքը, որ այս ուղիով նորացումը, անկախ ինտենսիվ նորացման գործակիցի մեծությունից, չի ապահովում աշխատատեղամանակի առավել հնարավոր խնայողությունը:

Կ. Մարքսը «ինտենսիվ վերարտադրություն» (ինչպես նաև «նորացում») հասկացության տակ նկատի է ունեցել բոլորովին այլ բովանդակություն և ցույց է տվել արտադրության արդյունավետության բարձրացման այն նոր պայմանները, որոնք մեծ մասամբ նպաստում են կենդանի և առարկայացած աշխատանքի ծախսումները խնայելուն:

Աշխատատեղամանակի տնտեսման օրենքն ընդունելով որպես համընդհանուր տնտեսական օրենք, Կ. Մարքսը գտնում էր, որ աշխատանքի միջոցների նորացման ինտենսիվությունը և առհասարակ արտադրության մյուս բոլոր տարրերը սերտորեն կապված են այդ միջոցները և տարրերը գործողության մեջ դնող աշխատուժի վերարտադրության տեմպերի և բնույթի հետ: Հետևաբար, ֆոնդերի ինտենսիվ նորացման նպատակը ոչ միայն դրանց փոխարինումն է նորով, այլև աշխատածախսումների տնտեսումը, որն անպայման պետք է համապատասխանի աշխատուժի վերարտադրության պահանջներին:

Գործնականում հնարավոր է նորերով փոխարինել հիմնական ֆոնդերի մեծ մասը, սակայն չապահովելով հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացման բարձր մակարդակը (երբ աշխատածախսումների տնտեսումը չնչին է) և ընդհակառակը ավելի քիչ քանակի ֆոնդերի նորացումով ապահովել

⁴ А. Шенйдеров, Обновление основных фондов промышленности («Плановое хозяйство», 1974, № 3, էջ 140—141):

⁵ Կ. Մարքս, Կապիտալ, հ. II, Երևան, 1936, էջ 140—141:

ինտենսիվ նորացման բարձր մակարդակ (երբ աշխատաժախսումների տնտեսումն անհամեմատ մեծ է)։

Տնտեսագիտական դրականության մեջ երբեմն հիմնական ֆոնդերի իրական պտույտը և դրանց ֆիզիկական նորացումը նույնացվում են⁶։ Նթե հիմնական ֆոնդերը պտույտի ժամանակ իրենց արժեքը մաս-մաս փոխանցում են թողարկվող արտադրանքին, ապա այդ ֆոնդերի նորացումը դրսևորվում է նրանց բնաիրային փոփոխմամբ։ Ամբողջովին բաժանելով ն. հմե-լեակու, Վ. Ջախարովի և ուրիշ տնտեսագետների այն կարծիքը, որ մեր արդյունաբերության մեջ հիմնական ֆոնդերի պտույտը բավականին դանդաղ է (որը գիտատեխնիկական առաջընթացի ներկա պայմաններում անհանդուրժելի է), չպետք է համաձայնել նրանց այն տեսակետի հետ, որ վերջին երկու հնգամյակներում (8-րդ և 9-րդ) հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացումը չնչին է (1—3%)։ Չժխտելով արտադրության արդյունավետության բարձրացման գործում հիմնական ֆոնդերի պտույտի արագացման կարևորությունը, պետք է նշել, որ միայն այդ ցուցանիշի միջոցով հնարավոր չէ ճիշտ որոշել հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացման և վերարտադրության արդյունավետությունը։

Հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացման ցուցանիշը հիմնականում կապված է թողարկվող արտադրանքի արտադրության և աշխատաժամանակի տնտեսման և այդ ֆոնդերի արդյունավետության բարձրացման հետ։ Նորացման պրոցեսի արագացումն անմիջական ազդեցություն է թողնում հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացման՝ գործող ֆոնդերից միավոր ժամանակում թողարկվող արտադրանքի քանակի ավելացման վրա։ Հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացումը և օգտագործումը դրանց վերարտադրության պրոցեսը բնորոշող, սերտորեն փոխկապված ցուցանիշներ են։ Հետևապես, հիմնական ֆոնդերի վերարտադրության արդյունավետությունը վերջին հաշվով նույնպես կապված է աշխատաժամանակի տնտեսման հետ։ Այս պայմաններում ինտենսիվությունը հանդես է գալիս որպես արդյունավետության առաջին գործոն։ Հնարավոր է հիմնական ֆոնդերի արդյունավետության բարձրացում առանց ինտենսիվության, բայց ինտենսիվությունն առանց դրանց արդյունավետության բարձրացման անհնար է։

Տնտեսագիտական գրականության մեջ հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացման և օգտագործման փոխադարձ կապը դեռևս բավարար լուսաբանված չէ, մինչդեռ դրանց միջև բավարար համամասնությունների սահմանումը և ճիշտ զուգակցումը կարևոր նշանակություն կունենա արտադրության արդյունավետության բարձրացման համար։

Արտադրության արդյունավետությունը մեծ մասամբ կախված է հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացումից, որովհետև դա, ինչպես նշվեց, միաժամանակ աշխատաժամանակի տնտեսում է։ Այդ իսկ պատճառով հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացման ցուցանիշը պետք է արտացոլի ինչպես կենդանի, այնպես էլ առարկայացած աշխատանքային ծախսումների փոփոխությունները։ Ինտենսիվ նորացման հաշվարկների հիմքում պետք է ընկած լինի

⁶ Н. Хмелевский, Влияние обновления основных фондов на эффективность их использования («Экономические науки», 1969, № 5, էջ 23); В. Г. Захаров. Научно-техническая революция и обновление основных фондов, Л., 1973, էջ 55—57։

հանձնարարվող ֆոնդաժամաբովանդակության ցուցանիշը, որը լիովին արտացոլում է միավոր արտադրանքի արժեքին ընկնող կենդանի և առարկայացած աշխատանքի տեսակարար ծախսումները:

Ինչպես երևում է աղյուսակ № 2-ի տվյալներից, 1971—1975 թթ. ՀՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը մեծացել է 43%-ով, հիմնական ֆոնդերի արժեքը՝ 45%-ով, իսկ հիմնական ֆոնդերի ֆոնդաժատույցը նվազել է 2%-ով: Ֆոնդադինվաժության 30% աճի դեպքում աշխատանքի արտադրողականությունը ավելացել է սոսկ 28%-ով: Հաշվարկները ցույց են տալիս, որ այդ տարիներին դուրս գրված հիմնական ֆոնդերը կազմել են դրանց սկզբնական արժեքի մոտ 11,4%-ը: Եթե հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացումը դիտենք ըստ նրանց դուրս դրման տոկոսի, ապա այն կկազմի 11,4, որն ավելի փոքր է դրա իրական մեծությունից:

Աղյուսակ № 2

ՀՍՍՀ ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի 1 ուրվում
ֆոնդաժամաբովանդակության ցուցանիշի հաշվարկումը 1971—1975 թթ. համար7

Ցուց	Ցուցանիշներ	Զափի միավոր	Բաղի- սային տարի 1971	Հաշվե- տու- տարի 1975	Փոփոխու- թյունը բա- ղի-ի նկատ- մամբ, տո- կոսներով
	1	2	3	4	5
1	Համախառն արտադրանքի ծավալը	հազ. ուրվ.	2779682	3965869	+43
2	Արդյունաբերա-արտադրական անձնա- կազմը	հազ. մարդ	282	314	+11
3	Հիմնական արտադրական ֆոնդերի ար- ժեքը (զնահատումը)	հազ. ուրվ.	1930527	2805116	+45
4	Հիմնական արտադրական բանվորի աշ- խատաժամերը	հազ./ժամ	372650	430422	+15
5	Աշխատանքի արտադրողականությունը (տող 1: տող 2)	ոուրվ.	9857	12630	+28
6	Ֆոնդադինվաժությունը (տող 3: տող 2)	հազ. ոուրվ.	6846	8933	+30
7	Ֆոնդահատույցը (տող 1: տող 3)	ուրվ.	1,44	1,41	— 2
8	1 ոուրվում աշխատատարությունը (տող. 4: տող 1)	ժամ/ուրվ.	0.13	0,11	+16
9	Հիմնական ֆոնդերի աշխատատարույնու- նը (տող 3×տող 8 սյունակ 3)	հազ./ժամ	250968	364665	+45
10	Ֆոնդաժամերը (տող 4+տող 9)	հազ./ժամ	623618	795087	+27
11	Արտադրանքի 1 ոուրվում ֆոնդաժամաբո- վանդակությունը (Ֆժբ) (տող 10: տող 1)	ժամ ոուրվ.	0.23	0.21	—8,7

Այստեղ 11,4%-ը ֆոնդերի պտույտի միջին տեղումնայնությունը և ծառայու-թյան միջին ժամկետին ավելի մոտ մեծություն է, և ճիշտ չի լինի այն ներ-կայացնել որպես ինտենսիվ նորացման չափ: Հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացման տեսակարար կշիռը նորացվող ամբողջ ֆոնդերի մեջ կարելի է որոշել հանձնարարվող ֆոնդաժամաբովանդակության ցուցանիշի օգնությամբ:

7 Հաշվարկները կատարված են ՀՍՍՀ կենտրոնական վիճակագրական վարչության տվյալ-ների հիման վրա:

Դիտարկվող ժամանակաշրջանի վերջում արտադրված ամրոգչ արտադրանքի յուրաքանչյուր 1 ուղիղու համախառն արտադրանքին ընկնող ֆոնդաժամարովանդակությունը (Ֆժր) նվազել է 8,7%-ով (աղյուսակ № 2), որը աշխատանքի տեխնիկական միջոցների կատարելագործման, դրանց ինտենսիվ նորացման շնորհիվ արտադրանքի միավորի մեջ կլանված աշխատածախսումների (կենդանի և առարկայացած) քտնակի կրճատման արդյունք է։ Նույն ժամանակամիջոցում հիմնական ֆոնդերի ընդհանուր նորացումը կազմել է 37% (որոշված է 1971—1975 թթ. դործարկված նոր հիմնական ֆոնդերի արժեքը 1975 թ. վերջի հիմնական ֆոնդերի ընդհանուր արժեքին հարաբերելու միջոցով)։

Նշելով ալս Երվու ցուցանիշներից (արտադրանքի ֆոնդաժամարովանդակություն և հիմնական ֆոնդերի ընդհանուր նորացման), դժվար չէ որոշել հիմնական ֆոնդերի ինտենսիվ նորացումը հետազոտվող ժամանակաշրջանում
$$\left(\frac{8.7 \times 100}{37} \right) = 23,5 \text{ առկոս։}$$
 Ուրեմն կարելի է ասել, որ նորացված ֆոնդերի 37%-ից 23,5-ը ձեռք է բերվել ինտենսիվ ճանապարհով։ Քանի որ ֆոնդերի ինտենսիվ նորացումը միաժամանակ ընդլայնվում է նրանցով պայմանավորված աշխատանքի արտադրողականությամբ, ապա որքան ինտենսիվ է ֆոնդերի նորացումը, համեմատաբար քիչ են միավոր արտադրանքի աշխատածախսումները։ Պայմանավորված դիտատեխնիկական առաջընթացով՝ հիմնական ֆոնդերի վերարտադրությունն ուղեկցվում է նրանց որակական փոփոխություններով։ Հիմնական ֆոնդերի տեխնիկական մակարդակի անշեղ բարձրացումը կատարվում է դրանց անընդհատ նորացման միջոցով։ Ահա թե ինչու արդի փուլում արտադրության պահանջմունքի բավարարման և հիմնական ֆոնդերի ռացիոնալ օգտագործման համար էլ ալելի մեծ ուշադրություն պետք է դարձնել հիմնական արտադրական ֆոնդերի ինտենսիվ նորացմանը, որի մեծությունը կարելի է որոշել օգտագործելով ֆոնդաժամարովանդակության (Ֆժր) ցուցանիշը։ Հանձնարարվող ցուցանիշը կարելի է ալսորեն օգտագործել նաև առանձին ձեռնարկությունների արտադրատնտեսական գործունեությունը գնահատելիս։

ОЦЕНКА ПОКАЗАТЕЛЕЙ ОБНОВЛЕНИЯ ОСНОВНЫХ ФОНДОВ И ИХ СОВЕРШЕНСТВОВАНИЕ

ЛЕВОН ХАЧАТРЯН

Резюме

Для ускорения темпов социалистического расширенного воспроизводства и повышения эффективности общественного производства важное значение имеют вопросы интенсивного обновления основных производственных фондов. Существующие показатели интенсивного обновления недостаточно полно характеризуют современные требования интенсивного обновления. Поэтому под обновлением основных фондов в основном понимается степень количественной замены устаревших оборудования новыми.

Однако в условиях развитого социализма, как отмечается в решениях XXV съезда КПСС, при обновлении основных производственных фондов большое значение приобретает их качественное изменение. В связи с этим важно применение нового показателя обновления, показывающего роль интенсивных факторов для повышения производительности труда и эффективности общественного производства.

При этом под интенсивным обновлением следует понимать ту часть обновленных основных фондов, которая непосредственно приводит к экономии живого и овеществленного труда. С этой целью предлагается новый показатель — «фондочасосодержание», в основе которого лежит экономия живого и овеществленного труда на единицу продукции.